



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 12 » 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000061

Ձեռնարկողը՝

«Շինարար գրուպ» ՍՊԸ
քաղաք Երևան, Ակսել Բակունց 4/1

Գործունեությունը՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի,
Թ. Նազարբեկյան թաղամասի 41/8 հողամասում նախատեսվող
բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

< 12 > 08 2020р.

Տարածքը իրենից ներկայացնում է բաց ազատ տարածք, ուր ծաղփային բուսականությունը բացակայում է: Նազարբեկյան 41/8 և 41/1 հասցեներում նախատեսվող «Շինարտ գրուպ» ՍՊԸ Ա, Բ, Գ մասնաշենքերի համար: Գ մասնաշենքը օրենքով սահմանված կարգով ենթարկվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և ստացվել է դրական փորձաքննական եզրակացություն:



Համաձայն նախնական գնահատման հայտի մինչև 17.0 մետր խորությունը ստորգետնյա ջրեր չեն հայտնաբերվել:

Համաձայն հայտի տարածքում բացակայում է բուսահողը և ծառափային բուսականությունը: Հողի վերին շերտում առկա է բետոն, նախկինում նախագծված շենքերի հիմքեր, սյունկալներ, բետոնե նախապատրաստական շերտ և այլն, տարածումը սահմանափակ է հզորությունը՝ 0.5-1.2 մետր, որը քանդվել և տեղափոխվել է աղբավայր: Համաձայն գնահատման հայտի գործունեության ենթակա տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան:

Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 27 ամիս շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոինքնաթափ մեքենա, էքսկավատոր, բուլդոզեր-ամբարձիչ, աշտարակային և ավտոմոբիլային վերամբարձ կոունկներ, ավտոբետոնախառնիչ, եռակցման սարք և այլն: Շինարարությունը կատարվելու է կապալային եղանակով՝ համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր և այլն: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Երկաթբետոնե հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 15500 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ(գրունտ), հետլիցք 1260 խմ (կարճաժամկետ կպահվի շինհրապարակում), մնացորդային քանակները 14240 մ³ ավտոինքնաթափերով ամբողջությամբ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, կենցաղային աղբն է՝ 20088 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր: Շինարարության ընթացքում առաջացող շինարարական աղբն մոտ 300 խմ ծավալով ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում տեխնիկական և խմելու ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով և տարաներով, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (124 մարդ) և կազմել 2452 մ³/շին. ժամ.: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 1215 մ³/շին. ժամ.: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3667 մ³/շին. ժամ.:

Տեղումներից առաջացող շինարարական հոսքաջրերը ուղորդվելու են պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվելու է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենալու մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը օգտագործվելու է տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը հեռացվելու է որպես շինաղբ:



Այն ներդաշնակ է տվյալ միջավայրում առկա կառույցներին և չի հանդիսանում տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար: Բնակելի շենքի համար առկա է ինսուլացիոն ազդեցության մասին եզրակացություն:

- Ընդհանուր տարածքը կազմում է 5780 քմ, որից
- Կառուցապատման մակերես 3468 քմ(60%);
- Կանաչապատում 2312 քմ;
- Նախատեսվող բնակարանների քանակը 187
- Նախատեսվող ստորգետնյա ավտոկայանատեղիներ 78
- հողամասերի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման համար:

Նախատեսվել է կառուցել Ա և Բ մասնաշենքերը որը ըստ նախագծի բաղկացած է 2 ստորգետնյա, մեկ հասարակական նշանակության, 13 և 15 բնակելի հարկերից: Ա մասնաշենքի 7-րդ հարկից սկսած տրված է տեռասսաձև լուծում, դիմացի շինությունների ինսուլացիոն նորմերը չխախտելու նպատակով:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Բնակելի համալիրի գազամատակարարումը և էլեկտրամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի:

Շահագործման ընթացքում ջերմամատակարարումը կիրականացվի անհատական ջեռուցման կաթսաներով:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ Սիլիկյան ծառուղուն զուգահեռ անցնող d=500մմ ջրագծից: Կոյուղագիծը կմիացվի Սիլիկյան ծառուղուն զուգահեռ անցնող d=500մմ կոյուղագծին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատման ընդհանուր մակերեսը կազմելու է 2312մ²(40%): Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Ըստ կանաչապատման նախագծի /դենդրոնախագիծ/ տարածքում տնկվելու են հետևյալ ծառատեսակները՝ թխկի սրատերև կարմիր – 14 հատ, գնդաձև ակացիա՝ 17 հատ, գնդաձև իլենի – 14հատ, գնդաձև սամշիտ – 58 հատ, կատալպա – 8 հատ, հուդայածառ – 6 հատ, սյունաձև թույա՝ 6 հատ, փովոլ գիհի – 2 հատ, ձիակասկ – 16 հատ, դրախտածառ – 5 հատ, սակուռա – 6հատ, ասպիրակ – 6 հատ, բարբարիս – 10հատ, սամշիտ – 560գծմ, ծաղկանոց – 22քմ, կուսախաղող – 190քմ(ուղղահայաց), սիզամարգ – 2927քմ: Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու կամ տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից, կամ ավտոցիստեռներով նախապես կնքելով պայմանագիր: Ոռոգման հաշվարկային ջրապահանջը կկազմի $60 \times 2312 \times 3 / 1000 = 416$ խմ/տարի:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ:



նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչնդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Փորձաքննական գործընթացին մասնակցել է քաղաքաշինության կոմիտեն, առողջապահության նախարարությունը և «Հիդրոոդերափանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, Աջափնյակի վարչական շրջանը: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի 32/3 հասցեյում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Շինարար Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի, Աջափնյակ վարչական շրջանի, Թ. Նազարբեկյան թաղամասի 41/8 հողամասում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Վ. Ռախյան